Հաստատված է «Լեքս Լեգալիս» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության
հիմնադրի՝ 20.03.2023 թվականի որոշմամբ
Հիմնադիր, միակ մասնակից Ա. Փիլոսյան

«Լեքս Լեգալիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
մշտապես գործող արբիտրաժային դատարանի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Արբիտրաժային դատարանի գործունեության սկզբունքները

2. Արբիտրաժային դատարանի իրավասությունը
3. Արբիտրաժային դատարան դիմելու իրավունքը
4. Գործերի քննության կարգը
5. Գործերի քննության նկատմամբ կիրառվող իրավունքը
6. Դատավարության լեզուն
7. Արբիտրային տրիբունալի ձևավորումը
8. Արբիտրի բացարկը
9. Բացարկման ընթացակարգը
10. Պարտականությունների կատարման անհնարինությունը կամ չկատարումը
11. Արբիտրի փոխարինումը
12. Արբիտրաժային վարույթի մասնակիցները, իրավունքները և պարտականությունները, ներկայացուցչությունը
13. Ապացուցումը
14. Ապացույցների ներկայացնելու կարգն ու ժամկետները
15. Ապացույցի տեսակները
16. Արբիտրաժային վարույթի վերաբերյալ ծանուցումը և այլ փաստաթղթերի առաքումը
17. Արբիտրաժային ծախսերը
18. Արբիտրաժային ծախսերի բաշխումը
19. Արբիտրաժային վարույթի սկիզբը
20. Փաստաթղթերի ներկայացման կարգը
21. Հայցադիմումի ձևը, բովանդակությունը, կից փաստաթղթերը
22. Հայցադիմումը վարույթ ընդունելը, վերադարձնելը
23. Հակընդդեմ հայցադիմումը
24. Հայցի հիմքը և առարկան փոփոխելը
25. Հայցադիմումի պատասխանը
26. Հայցի ապահովումը և նախնական կարգադրությունը
27. Հայցի ապահովման միջոցների և նախնական կարգադրությունների փոփոխումը, կասեցումը և դադարեցումը
28. Տեղեկությունների տրամադրումը
29. Հայցի ապահովման և նախնական կարգադրության հետ կապված ծախսերը
30. Արբիտրաժային գործի քննության ժամկետը
31. Գաղտնիությունը
32. Արբիտրաժային գործի նախապատրաստումը
33. Արբիտրաժային վարույթի գրավոր ընթացակարգը
34. Արբիտրաժային վարույթի բանավոր ընթացակարգը
35. Արբիտրաժային տրիբունալի կողմից նշանակված փորձագետը
36. Արբիտրաժի ավարտը
37. Արբիտրաժային տրիբունալի վճռի ձևը և բովանդակությունը
38. Վճռի ուղղումը և պարզաբանումը
39. Լրացուցիչ վճիռը
40. Արբիտրաժային տրիբունալի վճռի կատարումը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Արբիտրաժային դատարանը

1. «Լեքս Լեգալիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը մշտապես, ինքնուրույն գործող արբիտրաժային դատարան է /այսուհետ նաև՝ Արբիտրաժային դատարան/, որը գործում է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին /այսուհետ՝ Օրենսգիրք/, սույն Կանոնակարգին համապատասխան:

Արբիտրաժային դատարանի գտնվելու վայրն է քաղաք Երևանը:

2. Արբիտրաժային դատարանը կարող է նաև նիստ գումարել ցանկացած այլ վայրում, որը հարմար է համարում արբիտրների միջև խորհրդակցություն իրականացնելու, վկաներին, փորձագետներին կամ կողմերին լսելու կամ ապրանքներ, այլ գույք կամ փաստաթղթեր զննելու (ուսումնասիրելու) նպատակով:

Հոդված 2. Արբիտրաժային դատարանի գործունեության սկզբունքները

1. Արբիտրաժային դատարանը գործում է առանց անհարկի ձգձգումների կամ ծախսերի, անկախ, անկողմնակալ արբիտրաժային տրիբունալի կողմից վեճերի արդարացի, դրանց լուծման ընթացակարգի շուրջ համաձայնության գալու ազատության, օրինականության, իրավահավասարության, կողմերի մրցակցության և գաղտնիության սկզբունքների հիման վրա:

Հոդված 3. Արբիտրաժային դատարանի իրավասությունը

1. Արբիտրաժային դատարանի իրավասությանն են ենթակա՝

1) Առևտրային, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև ոչ առևտրային հարաբերություններից բխող այն վեճերը, որոնց լուծումը կնքված արբիտրաժային համաձայնությամբ կողմերը վերապահել Արբիտրաժային դատարանին:

2) Օրենքի և սույն Կանոնակարգի իմաստով առևտրային են համարվում քաղաքացիական իրավահարաբերություններից առաջացող առևտրային բնույթի բոլոր վեճերը: Առևտրային բնույթը, առանց սահմանափակման, մասնավորապես ներառում է բանկերի կամ այլ ֆինանսական կազմակերպությունների և նրանց հաճախորդների միջև կնքված գործարքներից բխող կամ դրանց հետ կապված վեճերը, ապրանքների մատակարարման և փոխանակման ու ծառայությունների մատուցման, առևտրային ներկայացուցչության կամ գործակալության, ֆակտորինգի, վարձակալության, լիզինգի, աշխատանքների կատարման, խորհրդատվության, նախագծման, լիցենզային, ներդրման, ֆինանսավորման, ապահովագրության, շահագործման կամ կոնցեսիայի, համատեղ ձեռնարկատիրության կամ արդյունաբերական, ձեռնարկատիրական համագործակցության այլ ձևերի, ծովային, օդային, երկաթուղային և ավտոմոբիլային փոխադրումների հետ կապված իրավահարաբերությունները:

Հոդված 4. Արբիտրաժային դատարան դիմելու իրավունքը

1. Արբիտրաժային համաձայնության առկայության դեպքում Արբիտրաժային դատարան դիմելու իրավունք ունեն իրավաբանական և ֆիզիկական անձինք՝ ներառյալ ՀՀ և օտարերկրյա քաղաքացիները, անհատ ձեռնարկատերերը, քաղաքացիություն չունեցող անձինք:

Հոդված 5. Գործերի քննության կարգը

1. Արբիտրաժային դատարանում գործերը քննվում են գործի քննության ժամանակ գործող Կանոնակարգով: Գործի քննության ընթացքում ծագող այն հարցերը, որոնք կարգավորված չեն սույն Կանոնակարգով, կարգավորվում են Օրենքով և Օրենսգրքով սահմանված կանոններով:

2. Արբիտրաժային դատարանը գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ Արբիտրաժային դատարանը արբիտրաժային վարույթին

մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է իրականացնել բանավոր լսումներ:

Հոդված 6. Գործերի քննության նկատմամբ կիրառվող իրավունքը

1.Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, Արբիտրաժային դատարանը վեճերը քննում է Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքի կիրառմամբ:

2. Վիճելի հարաբերությունը կարգավորող նյութահիրավական օրենքի կամ այլ իրավական ակտի բացակայության դեպքում Արբիտրաժային դատարանը կիրառում է նույնանման հարաբերություններ կարգավորող օրենքի նորմերը (օրենքի անալոգիա): Նման նորմերի բացակայության դեպքում Արբիտրաժային դատարանը վեճը լուծում է՝ ելնելով իրավունքի ընդհանուր սկզբունքներից (իրավունքի անալոգիա):

3. Արբիտրաժային դատարանն օրենքով նախատեսված դեպքերում կիրառում է գործարար շրջանառության սովորույթներ: Կիրառման ենթակա գործարար շրջանառության սովորույթի առկայությունն ապացուցելու պարտականությունը կրում է այն վկայակոչող արբիտրաժային վարույթին մասնակցող անձը:

4. Արբիտրաժային դատարանը կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում կարող է կիրառել նաև օտարերկրյա իրավունք՝ պայմանով, որ այն չհակասի Հայաստանի Հանրապետության հանրային կարգին:

Կողմերի համաձայնությամբ ցանկացած պետության իրավունքին կամ իրավական համակարգին կատարված հղումը պետք է մեկնաբանվի որպես տվյալ պետության իրավունքի նյութական, այլ ոչ թե կոլիզիոն նորմերին կատարված հղում:

5. Անկախ ընտրված իրավունքից՝ կողմերը մինչև վճռի կայացումը կարող են արբիտրաժային տրիբունալին ուղղակիորեն լիազորել վեճը լուծելու արդարության ընդհանուր սկզբունքների հիման վրա (ex aequo et bono) կամ որպես հաշտարար միջնորդ (amiable compositeur):

6. Բոլոր դեպքերում արբիտրաժային տրիբունալը վճիռ է կայացնում պայմանագրի պայմանների համաձայն՝ հաշվի առնելով տվյալ գործարքի համար կիրառելի իրավունքը և առևտրային սովորույթները:

Հոդված 7. Դատավարության լեզուն

1. Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, Արբիտրաժային դատարանում գործի քննությունն իրականացվում է հայերեն լեզվով:

2. Արբիտրաժային վարույթին մասնակցող անձինք դատավարական բոլոր փաստաթղթերը ներկայացնում են հայերեն կամ այլ լեզվով՝ հայերեն պատշաճ թարգմանությամբ:

3. Արբիտրաժային վարույթին մասնակցող անձինք իրավունք ունեն բանավոր լսումներին մասնակցել իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը:

4. Տեսողական խանգարում ունեցող անձանց մասնակցությունը արբիտրաժային վարույթին ապահովվում է մատչելի եղանակով, իսկ լսողական կամ խոսակցական խանգարումներ ունեցող անձանց՝ սուրդոթարգմանչի միջոցով:

5. Սույն հոդվածի 3-4-րդ մասերում նշված անձինք արբիտրաժային վարույթին իրենց մասնակցությունն ապահովում են սեփական միջոցների հաշվին, դրա անհնարինության դեպքում՝ պատշաճ մասնակցությունն ապահովելուն ուղղված

միջոցները ձեռնարկում է Արբիտրաժային դատարանը արբիտրաժային ծախսերի հաշվին:

Հոդված 8. Արբիտրային տրիբունալի ձևավորումը

1. Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի միջև կնքված արբիտրաժային համաձայնությամբ, ապա ոչ դրամային, ինչպես նաև մինչև քսան միլիոն ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթով հայցագին ունեցող վեճերը քննվում են միանձնյա արբիտրաժային տրիբունալի կազմով, իսկ քսան միլիոն ՀՀ դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթով հայցագին ունեցող վեճերը քննվում են երեք արբիտրների արբիտրաժային տրիբունալի կազմով:
2. Եթե կողմերը չեն համաձայնեցրել արբիտրի կամ արբիտրների նշանակման ընթացակարգը, արբիտրաժային տրիբունալը նախագահող միանձնյա արբիտր է դառնում հատուկ համակարգչային ծրագրի միջոցով Արբիտրաժային դատարանի արբիտրների ցանկից պատահական ընտրության սկզբունքով ընտրված արբիտրը:
Հատուկ համակարգչային ծրագրի բացակայության կամ դրա օգտագործման անհնարինության դեպքում արբիտրի նշանակումը կատարվում է Արբիտրաժային դատարանի նախագահի կողմից՝ արբիտրների ցանկից այբբենական հաջորդականությամբ:
3. Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, եռակազմ արբիտրաժային տրիբունալի ձևավորման դեպքում Կողմերից յուրաքանչյուրը նշանակում է Օրենքում նշված պահանջներին համապատասխանող մեկական արբիտր, իսկ կողմերի կողմից ընտրված արբիտրները Արբիտրաժային դատարանի արբիտրների անվանացանկում ընդգրկված արբիտրների կազմից ընտրում են երրորդ՝ նախագահող արբիտրին: Նշված ժամկետում Կողմերի ընտրած արբիտրների կողմից երրորդ /նախագահող/ արբիտր չընտրելու դեպքում վերջինս նշանակվում է Արբիտրաժային դատարանի նախագահի կողմից՝ Արբիտրաժային դատարանի արբիտրների անվանացանկում ընդգրկված արբիտրների կազմից:
4. Եթե հայցվորը հայցադիմումում, իսկ պատասխանողը հայցադիմումը և կից փաստաթղթերը ստանալու օրվանից հինգ օրվա ընթացքում չեն ներկայացնում իրենց կողմից ընտրված և Օրենքի պահանջներին համապատասխանող արբիտրի թեկնածություն կամ արբիտրաժային վարույթին մասնակցում են երկու կամ ավելի հայցվորներ կամ պատասխանողներ, որոնք չեն համաձայնվում արբիտրների համատեղ նշանակման հարցում, ապա եռակազմ արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է հատուկ համակարգչային ծրագրի միջոցով Արբիտրաժային դատարանի արբիտրների ցանկից պատահական ընտրության սկզբունքով ընտրված արբիտների կազմից, որոնցից մեկը լինում է նախագահող:
5. Հատուկ համակարգչային ծրագրի բացակայության կամ դրա օգտագործման անհնարինության դեպքում եռակազմ արբիտրաժային տրիբունալի երկու արբիտրների նշանակումը կատարվում է Արբիտրաժային դատարանի նախագահի կողմից՝ արբիտրների ցանկից այբբենական հաջորդականությամբ, որոնք անվանացանկում ընդգրկված արբիտրների կազմից ընտրում են երրորդ՝ նախագահող արբիտրին: Եռօրյա ժամկետում նշանակված երկու արբիտրների կողմից երրորդ /նախագահող/ արբիտր չընտրելու դեպքում վերջինս նշանակվում է Արբիտրաժային դատարանի նախագահի կողմից՝ Արբիտրաժային դատարանի արբիտրների ցանկից:

Հոդված 9. Արբիտրի բացարկը

1. Որպես արբիտր հնարավոր նշանակման մասին առաջարկ ստացած կամ հատուկ համակարգչային ծրագրի միջոցով ընտրված անձը պարտավոր է հայտնել ցանկացած այնպիսի հանգամանքների մասին, որոնք կարող են հիմնավոր կասկած առաջացնել նրա անկողմնակալության կամ անկախության վերաբերյալ: Արբիտրը իր նշանակման պահից և արբիտրաժի ամբողջ ընթացքում՝ մինչև արբիտրաժային տրիբունալի կողմից վերջնական վճռի կայացումը կամ արբիտրաժային վարույթի որևէ այլ ձևով ավարտը, պարտավոր է կողմերին անհապաղ հայտնել ցանկացած այդպիսի հանգամանքների մասին, եթե նա ավելի վաղ չի հայտնել վերջիններիս դրանց մասին:

2. Արբիտրին բացարկ կարող է հայտնվել միայն այն դեպքում, եթե առկա են հանգամանքներ, որոնք հիմնավոր կասկած են առաջացնում նրա անկողմնակալության կամ անկախության վերաբերյալ, կամ նա չունի կողմերի համաձայնությամբ սահմանված համապատասխան որակավորում:

3. Կողմը կարող է բացարկ հայտնել իր կողմից կամ իր մասնակցությամբ նշանակված արբիտրին միայն այնպիսի հիմքերով, որոնք իրեն հայտնի են դարձել նշանակումից հետո:

Հոդված 10. Բացարկման ընթացակարգը

1. Կողմերն իրենց միջև կնքված արբիտրաժային համաձայնությամբ կարող են սահմանել արբիտրի բացարկման ընթացակարգ:

2. Նման համաձայնության բացակայության դեպքում արբիտրին բացարկ հայտնելու մտադրություն ունեցող կողմը պարտավոր է արբիտրաժային տրիբունալի ձևավորման կամ սույն կանոնակարգի 9-րդ հոդվածում նշված որևէ հանգամանքի մասին իրեն հայտնի դառնալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, արբիտրաժային տրիբունալ ուղարկել գրավոր բացարկ՝ բացարկի հիմքերի շարադրմամբ: Եթե արբիտրը, որին բացարկ է հայտնվել, ինքնաբացարկ չի հայտնում, կամ մյուս կողմը, ստանալով այն, եռօրյա ժամկետում չի համաձայնվում բացարկին, ապա բացարկի հարցը որոշում է արբիտրաժային տրիբունալը:

3. Եթե կողմերի համաձայնեցրած կամ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով հայտնված բացարկը մերժվում է, ապա բացարկ հայտնած կողմը բացարկի մերժման մասին որոշումը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, կարող է դիմել Դատարան՝ բացարկի վերաբերյալ որոշում ընդունելու խնդրանքով, որի կայացրած ակտը բողոքարկման ենթակա չէ: Քանի դեռ կողմի նման դիմումի վերաբերյալ որոշում ընդունված չէ, արբիտրաժային տրիբունալը, ներառյալ՝ այն արբիտրը, որին բացարկ է հայտնվել, կարող է շարունակել արբիտրաժային վարույթը և վճիռ կայացնել:

Հոդված 11. Պարտականությունների կատարման անհնարինությունը կամ չկատարումը

1. Այն դեպքում, երբ արբիտրը իրավաբանորեն (de jure) կամ փաստացի (de facto) ի վիճակի չէ կատարել կամ այլ պատճառներով չի կատարում իր գործառույթները առանց անհարկի ձգձգման, նրա լիազորությունները դադարում են՝ ինքնաբացարկ հայտնելով, կամ երբ կողմերը համաձայնվում են նրա լիազորությունների դադարեցման մասին: Այլ դեպքերում, երբ առկա են տարաձայնություններ այդ հիմքերից որևէ մեկի վերաբերյալ, արբիտրի լիազորությունների դադարեցման հարցը լուծելու նպատակով կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել դատարան, որի կայացրած ակտը բողոքարկման ենթակա չէ: Արբիտրի մահվան (ներառյալ՝ դատարանի վճռով մահացած

ճանաչելու) կամ նրան դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու դեպքում արբիտրի լիազորությունները դադարում են:

2. Եթե սույն հոդվածի կամ 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արբիտրն ինքնաբացարկ է հայտնում, կամ կողմը համաձայնվում է նրա մանդատի դադարեցմանը, ապա դա չի ենթադրում սույն հոդվածով կամ 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերից որևէ մեկի ընդունում:

Հոդված 12. Արբիտրի փոխարինումը

1. Արբիտրի լիազորությունների դադարման, պարտականությունների կատարման անհնարինության, բացարկման, բացարկ հայտնելու դեպքերում սույն Կանոնակարգի 8-րդ հոդվածով սահմանված կարգով նշանակվում է նոր արբիտր/ներ/։

Հոդված 13. Արբիտրաժային վարույթի մասնակիցները, իրավունքները և պարտականությունները, ներկայացուցչությունը

1. Արբիտրաժային վարույթի մասնակիցների, նրանց իրավունքների և պարտականությունների, ներկայացուցչության, արբիտրաժային վարույթին ինքնուրույն պահանջներ ներկայացնող և ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց ներգրավման հարցերը, հաշվի առնելով Օրենքով և սույն Կանոնակարգով սահմանված առանձնահատկությունները, կարգավորվում են Օրենսգրքով։

Հոդված 14. Ապացուցումը

1. Արբիտրաժային վարույթին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու վեճի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, եթե այլ բան նախատեսված չէ Օրենսգրքով կամ այլ օրենքներով:

2. Արբիտրաժային վարույթին մասնակցող անձի պահանջների և առարկությունների հիմքում դրված փաստը ժխտող անձի վրա չի կարող դրվել այդ փաստի բացակայությունն ապացուցելու պարտականություն՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների տված կամ վավերացրած փաստաթղթի, ինչպես նաև նոտարական կարգով վավերացված փաստաթղթի իսկության վիճարկման դեպքերի։

3. Պարտավորության բովանդակությունը կազմող գործողությունը կատարված լինելու փաստն ապացուցելու պարտականությունը կրում է պարտապանը: Պարտավորությունը ոչ պատշաճ կատարված լինելու փաստը պետք է ապացուցի այդ փաստը վկայակոչող արբիտրաժային վարույթին մասնակցող անձը։

Հոդված 15. Ապացույցների ներկայացնելու կարգն ու ժամկետները

1. Ապացույցները ներկայացնում են արբիտրաժային վարույթին մասնակցող անձինք:

2. Արբիտրաժային վարույթին մասնակցող անձանց միջնորդությունները, ինչպես նաև նրանց պահանջների և առարկությունների հիմքում դրված փաստերը հիմնավորող ապացույցները կարող են ներկայացվել մինչև վճռի կայացումը։

Հոդված 16. Ապացույցի տեսակները

1. Ապացույցի տեսակներն են՝
1) վկայի ցուցմունքը.
2) գրավոր ապացույցները.
3) իրեղեն ապացույցները.
4) լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները.
5) փորձագետի եզրակացությունը.
6) մասնագետի բացատրությունը:

Հոդված 17. Արբիտրաժային վարույթի վերաբերյալ ծանուցումը և այլ փաստաթղթերի առաքումը

1. Արբիտրաժային վարույթի մասնակիցները սույն Կանոնակարգով սահմանված կարգով ծանուցվում են արբիտրաժային վարույթի և/կամ բանավոր լսումների ժամանակի և վայրի մասին:
2. Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, արբիտրաժային վարույթի մասնակիցներն արբիտրաժային վարույթի և/կամ բանավոր լսումների ժամանակի և վայրի մասին ծանուցվում են ծանուցագրի միջոցով, որում նշվում են՝
1) Արբիտրաժային դատարանի անվանումը.
2) Ծանուցագրի հասցեատիրոջ անձի անունը (անվանումը).
3) Արբիտրաժային գործի նկարագիրը.
4) Բանավոր լսումների դեպքում՝ ներկայանալու ժամանակը և վայրը.
5) Հասցեատիրոջ կարգավիճակը.
6) Արբիտրաժային դատարանի հասցեն և էլեկտրոնային փոստի հասցեն կամ տեղեկություններ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցի վերաբերյալ, որով արբիտրաժային վարույթի մասնակիցը կարող է հաղորդել տեղեկություններ և ուղարկել փաստաթղթեր:
3. Ծանուցագիրը՝
1) ուղարկվում է էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ կողմերի արբիտրաժային համաձայնությամբ սահմանված լինելու կամ Արբիտրաժային դատարան ներկայացված փաստաթղթերում էլեկտրոնային հաղորդակցության միջոցների և հասցեների նշման դեպքում.
2) Սույն մասի 1-ին կետով սահմանված կարգով ծանուցումն ուղարկելու անհնարինության դեպքում ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ, կամ հանձնվում է առձեռն:
4. Եթե արբիտրաժային վարույթի նյութերից հետևում է, որ վարույթի մասնակիցը կալանավայրում է, ազատազրկման վայրում, զորամասում, կարգապահական գումարտակում կամ բուժական հիմնարկում ստանում է ստացիոնար բուժում, ապա ծանուցագիրը և արբիտրաժային վարույթին վերաբերող մյուս փաստաթղթերը պետք է ուղարկվեն այդ հաստատությունների հասցեներով: Ծանուցմանը կից այդ հաստատությունների վարչակազմերին ուղարկվում է միջնորդագիր ծանուցագիրն ստանալուց անմիջապես հետո այն հանձնել հասցեատիրոջը՝ վերջինիս կողմից ստացման վերաբերյալ ապացույցն ուղարկելով Արբիտրաժային դատարան:
5. Եթե արբիտրաժային վարույթի մասնակցի ծանուցումն անհնարին է ապահովել սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի եղանակով կամ վերջինս հրաժարվել է ստանալ ծանուցագիրը, կամ նրա հայտնած հասցեով ուղարկված ծանուցագիրը վերադարձվել է Արբիտրաժային դատարան, կամ ուղարկելու

օրվանից տասնօրյա ժամկետում Արբիտրաժային դատարանը չի ստացել հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), կամ արբիտրաժային վարույթի մասնակցի հասցեն անհայտ է, ապա Արբիտրաժային դատարանը ծանուցագիրը ուղարկում է՝

1) ֆիզիկական անձի դեպքում՝ այդ անձի հաշվառման, աշխատանքի վայրի հայտնի հասցեով և անձի վերջին հայտնի բնակության վայրի համապատասխան համայնքի կամ վարչական շրջանի ղեկավարին, իսկ գործի նյութերում ֆիզիկական անձի այլ հասցեների առկայության դեպքում՝ նաև այդ հասցեներով.

2) իրավաբանական անձի դեպքում՝ այդ անձի մշտապես գործող մարմնի գտնվելու վայրի հասցեով, իսկ գործի նյութերում իրավաբանական անձի այլ հասցեների առկայության դեպքում՝ նաև այդ հասցեներով:

6. Ծանուցագիրը արբիտրաժային վարույթի մասնակիցներին ուղարկելու (հանձնելու) մասին սույն հոդվածի կանոնները կիրառելի են դատավարական փաստաթղթերը արբիտրաժային վարույթի մասնակիցներին ուղարկելու (հանձնելու) նկատմամբ:

7. Բոլոր դեպքերում գրավոր հաղորդակցությունը համարվում է ստացված, եթե Արբիտրաժային դատարանի կողմից սույն հոդվածով սահմանված գործողությունները ձեռնարկվել են:

Հոդված 18. Արբիտրաժային ծախսերը

1. Արբիտրաժային ծախսերը կազմված են արբիտրաժային վճարից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

2. Դրամային պահանջներով արբիտրաժային վճարը գանձվում է ՀՀ դրամով՝ հայցագնի 1.5 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 13,000.00 ՀՀ դրամից և ոչ ավել 1,500,000.00 ՀՀ դրամից:

3. Հայցագնի մեջ մտնում են նաև պահանջվող տուժանքի (տուգանքի, տույժի) և տոկոսների գումարները՝ հայցադիմումը ներկայացնելու օրվա դրությամբ:

Մի քանի ինքնուրույն պահանջներից կազմված հայցագինը որոշվում է բոլոր պահանջների ընդհանուր գումարով:

4. Ոչ դրամային պահանջներով արբիտրաժային վճարը գանձվում է 50,000.00 ՀՀ դրամ գումարով:

5. Գործի նյութերի՝ հայցադիմումին կից փաստաթղթերի և այլ անհրաժեշտ ապացուցների պատճենահանման համար սահմանվում է վճար՝ յուրաքանչյուր էջը 40.00 /քառասուն/ ՀՀ դրամ:

6. Արբիտրաժային վճարը հայցվորի կողմից վճարվում է «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությունում «Լեքս Լեգալիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թիվ 1570090461760200 հաշվեհամարին:

7. Հայցային պահանջներն ավելացնելու դեպքում արբիտրաժային վճարի չբավականացնող մասը գանձվում է հայցապահանջներն ավելացնելիս՝ փոփոխված պահանջներին համապատասխան:

Հոդված 19. Արբիտրաժային ծախսերի բաշխումը

1. Արբիտրաժային ծախսերը արբիտրաժային վարույթին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

2. Արբիտրաժային վարույթին մասնակցող անձանց միջև արբիտրաժային ծախսերի բաշխման մասին գրավոր համաձայնություն կայացվելու դեպքում Արբիտրաժային դատարանը արբիտրաժային ծախսերը բաշխում է դրան համապատասխան:

Հոդված 20. Արբիտրաժային վարույթի սկիզբը

1. Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա տվյալ վեճի հետ կապված արբիտրաժային վարույթը համարվում է սկսված՝ վեճն արբիտրաժին փոխանցելու մասին ծանուցումը պատասխանողի կողմից ստանալու օրը:

Հոդված 21. Փաստաթղթերի ներկայացման կարգը

1. Արբիտրաժային վարույթին վերաբերող բոլոր փաստաթղթերը կողմերը պետք է ներկայացնեն արբիտրաժային դատարանին 2 /երկու/ օրինակից, բացառությամբ երբ Արբիտրաժային վարույթի մասնակիցը Արբիտրաժային դատարան ներկայացնում է փաստաթղթերը մյուս կողմին ուղարկելը հավաստող ապացույց:

Հոդված 22. Հայցադիմումի ձևը, բովանդակությունը, կից փաստաթղթերը

1. Հայցադիմումը ներկայացվում է գրավոր, այն պետք է լինի ընթեռնելի:
2. Հայցադիմումում պարտադիր նշվում են՝
1) Արբիտրաժային դատարանի անվանումը, որին ներկայացվում է հայցադիմումը.
2) հայցվորի անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է հաշվառման (գտնվելու) վայրի հասցեից), այդ թվում՝ հայցվոր քաղաքացու անձը հաստատող փաստաթղթի տվյալները (այսուհետ՝ անձնագրային տվյալներ), հայցվոր իրավաբանական անձի պետական գրանցման համարը, նրա ներկայացուցչի անունը, անձնագրային տվյալները, ծանուցման հասցեն, իսկ եթե հայցը ներկայացրել է դրա իրավունքն ունեցող պաշտոնատար անձը՝ նաև այդ անձի անունը, պաշտոնը.
3) պատասխանողի անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակվելու վայրի հասցեն.
4) արբիտրաժային վարույթին մասնակցող այլ անձանց անունը (անվանումը), նրանց հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակվելու վայրի հասցեն.
5) այն փաստերը, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները.
6) դրամական պահանջի դեպքում՝ պահանջվող կամ վիճարկվող գումարի չափը և հաշվարկը.
7) պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը (պահանջները), իսկ մի քանի պատասխանողների դեմ հայցադիմում ներկայացնելիս հայցվորի՝ նրանցից յուրաքանչյուրին ուղղված պահանջը (պահանջները), եթե այն համիրավ չէ.
8) հղում արբիտրաժային համաձայնությանը.
9) սույն կանոնակարգով նախատեսված դեպքերում արբիտրի անունը և ազգանունը, որին ընտրել է հայցվորը.
10) հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերի և ապացույցների ցանկը:
3. Հայցադիմումում կարող են նշվել՝
1) վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառման ենթակա իրավական նորմերը.

2) այն ապացույցները, որոնք հաստատում են հայցի հիմքում դրված փաստերից յուրաքանչյուրը՝ համապատասխան նշումով, թե որ ապացույցն ինչ փաստի հաստատմանն է ուղղված.

3) հայցվորի միջնորդությունները.

4) այլ տեղեկություններ, որոնք նշանակություն ունեն գործի քննության և լուծման համար.

5) էլեկտրոնային հաղորդակցության միջոցի վերաբերյալ տեղեկությունը.

6) հայցվորի կամ հայցվորի ներկայացուցչի հեռախոսահամարը:

4. Հայցադիմումն ստորագրում է հայցվորը կամ նրա ներկայացուցիչը: Ներկայացուցչի ստորագրած հայցադիմումին կցվում են նրա լիազորությունը հավաստող փաստաթուղթը և անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

5. Հայցադիմումին կցվում են՝

1) հայցվորի անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

2) Կանոնակարգով սահմանված կարգով և չափով արբիտրաժային վճարը վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակը.

3) լիազորագիրը կամ այլ փաստաթուղթ, որը հավաստում է ներկայացուցչի լիազորությունը, եթե հայցվորը հանդես է գալու ներկայացուցչի միջոցով, և ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

4) հայցադիմումի օրինակը և դրան կից փաստաթղթերի պատճենները կամ դրանք արբիտրաժային վարույթին մասնակցող անձանց ուղարկելը հավաստող ապացույց:

Հոդված 23. Հայցադիմումը վարույթ ընդունելը, վերադարձնելը

1. Սույն կանոնակարգի 22-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտմամբ ներկայացված հայցադիմումը արբիտրաժային տրիբունալի ձևավորումից և հայցադիմումն ու կից փաստաթղթերն արբիտրաժային տրիբունալին հանձնելուց հետո հնգօրյա ժամկետում վերադարձվում է հայցվորին՝ առաջարկելով շտկել որոշմամբ արձանագրված թերությունները:

Արբիտրաժային դատարանի աշխատակազմը կարող է հաղորդակցության միջոցով (առկայության դեպքում) տեղեկացնել հայցվորին հայցադիմումում առկա թերությունների մասին՝ առաջարկելով եռօրյա ժամկետում վերացնել դրանք:

2. Եթե հայցվորը պնդում է ներկայացված հայցադիմումի շրջանակներում քննության իրականացումը, ապա արբիտրաժային վարույթը սկսվում է տվյալ հայցադիմումի հիման վրա, որի հետագա ընթացքը որոշում է արբիտրաժային տրիբունալը:

3. Արբիտրաժային տրիբունալը ձևավորումից և հայցադիմումն ու կից փաստաթղթերն արբիտրաժային տրիբունալին հանձնելուց հետո հնգօրյա ժամկետում վարույթ է ընդունում ներկայացված հայցադիմումը, եթե առկա չեն հայցադիմումի վերադարձնելու հիմքերը:

4. Արբիտրաժային տրիբունալի հայցադիմումը վարույթ ընդունելու որոշման մեջ նշվում են նաև վարույթն իրականացնել բանավոր կամ գրավոր ընթացակարգով՝ ներկայացված փաստաթղթերի և այլ նյութերի հիման վրա, վերջինիս դեպքում՝ նաև վճռի կայացման օրը:

5. Արբիտրաժային տրիբունալը պարտավոր է իրականացնել բանավոր լսումներ արբիտրաժային վարույթի համապատասխան փուլում՝ կողմերից որևէ մեկի խնդրանքով, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմերը պայմանավորվել են չիրականացնել բանավոր լսումներ:

Հոդված 24. Հակընդդեմ հայցադիմումը

1. Պատասխանողն իրավունք ունի հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո մեկշաբաթյա ժամկետում Արբիտրաժային դատարան ներկայացնել հակընդդեմ հայցադիմում:

2. Հակընդդեմ հայցը ներկայացվում է, վարույթ է ընդունվում կամ վերադարձվում է հայցադիմումին վերաբերող սույն Կանոնակարգով նախատեսված կարգով:

3. Հակընդդեմ հայցն առաջին Արբիտրաժային դատարանն ընդունում է վարույթ, եթե՝

1) հակընդդեմ պահանջն ուղղված է սկզբնական պահանջի հաշվանցմանը.

2) հակընդդեմ հայցի բավարարումն ամբողջությամբ կամ մասնակիորեն բացառում է սկզբնական հայցի բավարարումը.

3) հակընդդեմ և սկզբնական հայցերի միջև առկա է փոխադարձ կապ, ու դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել գործի առավել արագ և արդյունավետ լուծումը:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված հիմքերի բացակայության, ինչպես նաև Կանոնակարգի 22-րդ հոդվածում սահմանված պահանջների խախտման դեպքում Արբիտրաժային դատարանը վերադարձնում է հակընդդեմ հայցադիմումը:

Հոդված 25. Հայցի հիմքը և առարկան փոփոխելը

1. Հայցվորն իրավունք ունի հայցի առարկայի և հիմքի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ ներկայացնում է գրավոր միջնորդություն մինչև արբիտրաժային տրիբունալի կողմից վճռի հրապարակման օրը:

2. Հայցի առարկան կամ հիմքը չեն կարող փոփոխվել այնպես, որ հայցապահանջները դուրս գան արբիտրաժային համաձայնության շրջանակներից:

3. Հայցի առարկան փոփոխելու դեպքում հայցվորը պարտավոր է դիմումին կից ներկայացնել արբիտրաժային վճարի չբավականացնող մասի վճարումը հավաստող փաստաթուղթ:

4. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջների խախտման դեպքում Արբիտրաժային դատարանը վերադարձնում է հայցի առարկայի և/կամ հիմքի փոփոխության վերաբերյալ միջնորդությունը:

Հոդված 26. Հայցադիմումի պատասխանը

1. Պատասխանողը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, Արբիտրաժային դատարան է ներկայացնում հայցադիմումի պատասխան: Հայցադիմումի պատասխանը ներկայացվում է գրավոր, այն պետք է լինի ընթեռնելի:

2. Հայցադիմումի պատասխանը պետք է պարունակի՝

1) Արբիտրաժային դատարանի անվանումը, որին ներկայացվել է հայցադիմումը.

2) պատասխանողի անունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) հասցեն, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է հաշվառման (գտնվելու) հասցեից), պատասխանող քաղաքացու անձնագրային տվյալները, պատասխանող իրավաբանական անձի պետական գրանցման համարը.

3) հայցադիմումում ներկայացված պահանջը ընդունելու կամ դրա դեմ մասնակի կամ ամբողջությամբ առարկելու մասին դիրքորոշումը.

4) հայցի փաստական հիմքերի վերաբերյալ դիրքորոշումը.

5) պատասխանի (առարկությունների) հիմքում դրված փաստերը.

6) Արբիտրաժային համաձայնության վավերության կամ կիրառելի լինելու վերաբերյալ առարկությունների դեպքում՝ դրանց հիմնավորումները.

7) հայցադիմումի պատասխանին կից ներկայացվող փաստաթղթերի և ապացույցների ցանկը:

3. Պատասխանում կարող են նշվել՝

1) վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառման ենթակա իրավական նորմերը.

2) այն ապացույցները, որոնք հաստատում են առարկությունների հիմքում դրված փաստերից յուրաքանչյուրը՝ համապատասխան նշումով, թե որ ապացույցն ինչ փաստի հաստատմանն է ուղղված.

3) պատասխանողի միջնորդությունները.

4) այլ տեղեկություններ, որոնք նշանակություն ունեն վեճի քննության և լուծման համար.

5) էլեկտրոնային հաղորդակցության միջոցի վերաբերյալ տեղեկությունը՝ ծանուցումն այդ միջոցով իրականացնելու միջնորդությամբ:

4. Պատասխանը ստորագրում է պատասխանողը կամ նրա ներկայացուցիչը: Ներկայացուցչի ստորագրած պատասխանին կցվում է նրա լիազորությունը հավաստող փաստաթուղթը և անձը հաստատող փաստաթղթի պատճենը, եթե դրանք նախկինում տվյալ գործով չեն ներկայացվել: Ներկայացուցչի լիազորությունը հավաստող փաստաթղթի բացակայության դեպքում պատասխանը համարվում է չներկայացված, եթե արբիտրաժային վարույթի ընթացքում պատասխանողը չի հաստատում պատասխանը, կամ չի ներկայացվում ներկայացուցչի լիազորությունը հավաստող փաստաթուղթ:

5. Հայցադիմումի Պատասխանին կցվում են դրա օրինակը, կից ներկայացվող փաստաթղթերը և ապացույցները արբիտրաժային վարույթին մասնակցող անձանց ուղարկելը հավաստող ապացույցները:

6. Պատասխանին կից ներկայացվում են պատասխանի հիմքում դրված փաստերը հաստատող ապացույցներ:

7. Հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը փոփոխելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը բավարարելու դեպքում Արբիտրաժային դատարանը պատասխանողին տրամադրում մեկշաբաթյա ժամկետ՝ փոփոխված հայցադիմումի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար:

8. հայցադիմումի պատասխանի օրինակը և դրան կից փաստաթղթերի պատճենները կամ դրանք արբիտրաժային վարույթին մասնակցող անձանց ուղարկելը հավաստող ապացույց::

Հոդված 27. Հայցի ապահովումը և նախնական կարգադրությունը

1. Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, արբիտրաժային տրիբունալը կողմերից յուրաքանչյուրի միջնորդությամբ կարող է որոշում կայացնել հայցի ապահովման այնպիսի միջոցներ կիրառելու վերաբերյալ, որոնք նա գտնի անհրաժեշտ՝ հաշվի առնելով վեճի առարկան:

2. Արբիտրաժային տրիբունալը կարող է ցանկացած կողմից պահանջել տրամադրել ձեռնարկվող միջոցներին համապատասխանող ապահովում՝ հայցի ապահովման միջոցների կիրառմամբ մյուս կողմին պատճառվելիք հնարավոր վնասների կանխման կամ հատուցման նպատակով ու ապացույցները պահպանելու նպատակով:

3. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված որոշումները կարող են ամրագրվել միջանկյալ վճռի ձևով:

4. Հայցի ապահովման միջոցներ կիրառելու դիմում ներկայացնող կողմն արբիտրաժային տրիբունալին հիմնավորում է, որ հայցի ապահովման միջոց չկիրառելու դեպքում կհասցվի այնպիսի վնաս, որը հնարավոր չէ համապատասխանաբար վերականգնել վնասները հատուցելու միջոցով և այդ վնասը զգալիորեն կգերազանցի այն վնասը, որը կհասցվի այն կողմին, որի նկատմամբ կիրառվելու է հայցի ապահովման միջոցը:

5. Կողմերից մեկը կարող է առանց արբիտրաժային վարույթի մյուս կողմին ծանուցելու դիմել հայցի ապահովման միջոց կիրառելու համար՝ միաժամանակ ներկայացնելով նախնական կարգադրություն տալու մասին միջնորդություն: Եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ, ապա նախնական կարգադրություն տալու մասին միջնորդությունով կողմը կարող է պահանջել մյուս կողմից չիրականացնել որևէ գործողություն, որով կարող է անհնարին դառնալ հայցի ապահովման միջոցի կատարումը:

6. Արբիտրաժային տրիբունալը կարող է արձակել նախնական կարգադրություն, եթե գտնի, որ հայցի ապահովման միջոց կիրառելու դիմումի մասին նախապես այն կողմին տեղեկացնելը, որի դեմ այն ուղղված է, կարող է անհնարին դարձնել հայցի ապահովման միջոցի կատարումը:

7. Սույն հոդվածի 4-րդ մասում նշված պայմանները կիրառվում են ցանկացած նախնական կարգադրության նկատմամբ, իսկ հոդվածում նշված վնասն այն վնասն է, որը կառաջանա կարգադրությունը տալու կամ չտալու հետևանքով:

8. Արբիտրաժային տրիբունալի կողմից նախնական կարգադրություն տալու մասին միջնորդության վերաբերյալ որոշում կայացվելուց անմիջապես հետո արբիտրաժային տրիբունալը բոլոր կողմերին ծանուցում է հայցի ապահովման միջոց սահմանելու դիմումի, նախնական կարգադրություն տալու մասին միջնորդության, առկայության դեպքում՝ նախնական կարգադրության և կողմերից յուրաքանչյուրի և արբիտրաժային տրիբունալի միջև դրանց վերաբերյալ մյուս բոլոր հաղորդագրությունների մասին, այդ թվում՝ նշելով ցանկացած բանավոր հաղորդագրության բովանդակությունը:

9. Արբիտրաժային տրիբունալը յուրաքանչյուր կողմի հնարավորություն է ընձեռում ներկայացնելու իր դիրքորոշումը սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված բոլոր դեպքերում ծանուցումը ստանալուց հետո՝ երկօրյա ժամկետում:

10. Արբիտրաժային տրիբունալը որոշում է կայացնում նախնական կարգադրության դեմ ներկայացված ցանկացած առարկության վերաբերյալ ոչ ուշ, քան այդ առարկությունները ներկայացվելուց հետո՝ երկօրյա ժամկետում, որոշելով բավարարել հայցի ապահովման միջոցը չվնասելու վերաբերյալ միջնորդությունը կամ մերժելով ներկայացված միջնորդությունը:

11. Նախնական կարգադրության գործողությունը դադարում է արբիտրաժային ային տրիբունալի կողմից այդ մասին որոշումն ընդունվելու օրվանից քսան օր հետո: Արբիտրաժային տրիբունալը կարող է սահմանել հայցի ապահովման միջոց՝ ընդունելով կամ փոփոխելով նախնական կարգադրությունը նրանից հետո, երբ այն կողմը, որի համար նախատեսված է նախնական կարգադրությունը, ծանուցվել և հնարավորություն է ստացել ներկայացնելու իր դիրքորոշումը:

12. Նախնական կարգադրությունը պարտադիր է կողմերի համար: Այդպիսի նախնական կարգադրությունը վճիռ չի համարվում:

Հոդված 28. Հայցի ապահովման միջոցների և նախնական կարգադրությունների փոփոխումը, կասեցումը և դադարեցումը

1. Արբիտրաժային տրիբունալը կարող է փոփոխել, կասեցնել կամ դադարեցնել իր սահմանած հայցի ապահովման միջոցը կամ նախնական կարգադրությունը՝ կողմերից մեկի դիմումի հիման վրա, կամ բացառիկ դեպքերում կողմերին նախապես ծանուցելուց հետո՝ իր նախաձեռնությամբ:

Հոդված 29. Տեղեկությունների տրամադրումը

1. Արբիտրաժային տրիբունալը կարող է արբիտրաժային վարույթի ցանկացած կողմից պահանջել անհապաղ հայտնել այն հանգամանքների ցանկացած էական փոփոխության մասին, որոնց հիման վրա ներկայացվել է հայցի ապահովման միջոցը սահմանելու դիմում, կամ որոնց հիման վրա սահմանվել է հայցի ապահովման միջոցը:

2. Նախնական կարգադրություն տալու մասին միջնորդություն ներկայացնող կողմն արբիտրաժային տրիբունալին հայտնում է բոլոր այն հանգամանքների մասին, որոնք վերաբերելի են արբիտրաժային տրիբունալի՝ կարգադրություն տալու կամ այն պահպանելու մասին որոշմանը, և այդ պարտավորությունը շարունակում է գործել, քանի դեռ այն կողմին, որի համար նախատեսված է կարգադրությունը, չի տրամադրվել իր դիրքորոշումը ներկայացնելու հնարավորություն:

Հոդված 30. Հայցի ապահովման և նախնական կարգադրության հետ կապված ծախսերը

1. Հայցի ապահովման միջոց կամ նախնական կարգադրություն սահմանված լինելու դեպքում արբիտրաժային տրիբունալը վեճն ըստ էության լուծող որոշման մեջ կամ միջանկյալ դատական ակտում անդրադառնում է այդ հայցի ապահովման միջոցի կամ կարգադրության հետևանքով ցանկացած կողմի հասցված բոլոր վնասներին, ինչպես նաև կարող է արձանագրել, որ տվյալ հանգամանքներում հայցի ապահովման միջոցը կամ կարգադրությունը չպետք է սահմանվեր:

2. Հայցի ապահովման միջոց սահմանելու դիմում կամ նախնական կարգադրություն տալու մասին միջնորդություն ներկայացնող կողմը պատասխանատվություն է կրում այդ հայցի ապահովման միջոցի կամ կարգադրության հետևանքով ցանկացած կողմի հասցված բոլոր վնասների համար, եթե արբիտրաժային տրիբունալը հետագայում որոշում է, որ տվյալ հանգամանքներում հայցի ապահովման միջոցը կամ կարգադրությունը չպետք է սահմանվեր: Արբիտրաժային տրիբունալը վնասների հատուցման մասին հարցը լուծում է վերջնական վճռում:

3. Արբիտրաժային տրիբունալը սույն հոդվածի 1-ին մասում նշված հարցերին անդրադառնում է միջանկյալ դատական ակտի ընդունմամբ իր նախաձեռնությամբ կամ այն կողմի միջնորդությամբ, որի նկատմամբ կիրառվել է հայցի ապահովումը կամ ընդունվել նախնական կարգադրությունը:

Հոդված 31. Արբիտրաժային գործի քննության ժամկետը

1. Արբիտրաժային տրիբունալը որպես կանոն արբիտրաժային վարույթն ավարտում է հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո եռամսյա ժամկետում:

2. Բացառիկ դեպքերում, այդ թվում՝ արբիտրաժային վարույթի ընթացքում ի հայտ եկած հանգամանքներով պայմանավորված /հակընդդեմ հայցի, նոր ապացույցների, միջնորդությունների ներկայացում և այլն/ արբիտրաժային տրիբունալը սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ կարող է ողջամիտ և անհրաժեշտ ժամկետով երկարաձգել սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետը:

Հոդված 32. Գաղտնիությունը

1. Արբիտրաժային դատարանը, արբիտրաժային դատարանի նախագահը, արբիտրները և աշխատակիցները պարտավոր են չհրապարակել արբիտրաժային դատարանին հանձնված վեճերի մասին իրենց հայտնի դարձած որևէ տեղեկություն, որոնց հրապարակումը կարող է վնաս հասցնել այլ անձանց:

2. Եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, դատարանի որոշմամբ կամ կողմերի համաձայնությամբ, ապա բոլոր արբիտրաժային վարույթները գաղտնի են և դռնփակ, և ոչ մի փաստաթուղթ կամ ներկայացված այլ ապացույց կամ արբիտրաժային լսումների ժամանակ երբևէ կատարված հայտարարություն չի կարող տրամադրվել այլ անձանց կամ որևէ դատարանի կամ այլ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տեղեկությունները տրամադրվում են դատարանի որոշմամբ կամ անհրաժեշտ են դատարանում վարույթի շրջանակներում՝ արբիտրաժի վճռի ճանաչման, հարկադիր կատարման կամ չեղյալ հայտարարման համար:

Հոդված 33. Արբիտրաժային գործի նախապատրաստումը

1. Արբիտրաժային տրիբունալը ստուգում է արբիտրաժային գործի նախապատրաստման վիճակը արբիտրաժային վարույթին և անհրաժեշտության դեպքում՝ ձեռնարկում լրացուցիչ միջոցներ գործի նախապատրաստման համար, մասնավորապես՝ պահանջել կողմերից գրավոր բացատրություններ, ապացույցներ և լրացուցիչ այլ փաստաթղթեր՝ սահմանելով ողջամիտ ժամկետներ, որոնց ընթացքում պետք է իրականացվեն այդ լրացուցիչ միջոցները:

Հոդված 34. Արբիտրաժային վարույթի գրավոր ընթացակարգը

1. Արբիտրաժային տրիբունալին կողմերից մեկի ներկայացրած բոլոր հայտարարությունները, փաստաթղթերը կամ այլ տեղեկատվությունը, ինչպես նաև ապացույցները, միջնորդությունները պետք է տրամադրվեն մյուս կողմին:

Հոդված 35. Արբիտրաժային վարույթի բանավոր ընթացակարգը

1. Բանավոր ընթացակարգն իրականացվում է Արբիտրաժային տրիբունալի կողմից հրավիրվող դռնփակ նիստերում՝ լսումների միջոցով:

2. Հայցադիմումի պատասխանը կամ հակընդդեմ հայցադիմում ներկայացվելու դեպքում հակընդդեմ հայցադիմումի պատասխանը Արբիտրաժային տրիբունալի կողմից ստանալուց կամ պատասխան ներկայացնելու սույն Կանոնակարգով սահմանված ժամկետը լրանալուց հետո Արբիտրաժային տրիբունալի կողմից հրավիրվում է նիստ, որի վայրի և ժամանակի մասին արբիտրաժային վարույթի մասնակիցները ծանուցվում են սույն Կանոնակարգով սահմանված կարգով:

3. Կողմերից որևէ մեկի նիստին չներկայանալու կամ արբիտրաժային

տրիբունալի կողմից կամ կողմերի համաձայնությամբ սահմանված ժամկետում գրավոր ապացույցներ չներկայացնելու դեպքում՝ արբիտրաժային տրիբունալը շարունակում է վարույթը և վճիռ կայացնում՝ իր մոտ առկա ապացույցների հիման վրա:

Հոդված 36. Արբիտրաժային տրիբունալի կողմից նշանակված փորձագետը

1. Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա արբիտրաժային տրիբունալը իր նախաձեռնությամբ կամ արբիտրաժային վարույթի կողմի միջնորդությամբ կարող է՝

1) նշանակել մեկ կամ մի քանի փորձագետ՝ արբիտրաժային տրիբունալի կողմից որոշված հարցերի վերաբերյալ եզրակացություն տալու համար.

2) պահանջել կողմից՝ փորձագետին տրամադրել արբիտրաժային վարույթին վերաբերող ցանկացած տեղեկություն կամ ուսումնասիրության համար ներկայացնել արբիտրաժային վարույթին վերաբերող փաստաթղթեր, ապրանքներ և այլ գույք կամ այդպիսի փաստաթղթերի, ապրանքների և այլ գույքի ուսումնասիրության հնարավորություն ստեղծել:

2. Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա կողմերից մեկի պահանջով, կամ եթե արբիտրաժային տրիբունալը դա անհրաժեշտ համարի, փորձագետը պարտավոր է իր գրավոր կամ բանավոր եզրակացությունը ներկայացնելուց հետո մասնակցել նիստին, որտեղ արբիտրաժային տրիբունալին և կողմերին հնարավորություն կտրվի նրան հարցեր տալու, ինչպես նաև կողմերը կարող են ներկայացնել փորձագետ-վկաներ՝ քննվող հարցերի շուրջ բացատրություններ տալու նպատակով:

3. Սույն հոդվածով սահմանված կարգով նշանակված փորձագետի եզրակացությունը ենթակա է գնահատման արբիտրաժային տրիբունալի կողմից:

Հոդված 37. Արբիտրաժի ավարտը

1. Արբիտրաժն ավարտվում է արբիտրաժային տրիբունալի կողմից վճռի կամ սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որոշման կայացմամբ:

2. Արբիտրաժային տրիբունալը արբիտրաժի ավարտի վերաբերյալ կայացնում է որոշում այն դեպքում, երբ՝

1) հայցվորը հրաժարվում է հայցից, բացառությամբ, երբ պատասխանողն առարկում է արբիտրաժային վարույթի ավարտման դեմ, և արբիտրաժային տրիբունալը ճանաչում է նրա օրինական շահը վեճի վերջնական կարգավորման հարցում.

2) կողմերը պայմանավորվում են վարույթի դադարեցման վերաբերյալ.

Հոդված 38. Արբիտրաժային տրիբունալի վճռի ձևը և բովանդակությունը

1. Արբիտրաժային տրիբունալի վճիռը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

2. Վճռի ներածական մասը պետք է պարունակի վճիռ կայացնող արբիտրաժային դատարանի անվանումը, դատարանի կազմը, արբիտրաժային գործի համարը, վճիռը կայացնելու տարին, ամիսը, ամսաթիվը, արբիտրաժային վարույթին մասնակցող անձանց անունը (անվանումը), հայցի առարկան: Վճռի ներածական մասում պետք է նշվեն նաև արբիտրաժային վարույթին մասնակցող անձանց՝ քաղաքացու անձնագրային տվյալները, իրավաբանական անձի հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման վկայականի համարը:

3. Վճռի նկարագրական մասը պետք է պարունակի՝

1) հայցվորի դիրքորոշման հակիրճ բովանդակությունը

2) նշում այն մասին, թե արդյոք փոփոխվել է հայցի առարկան կամ հիմքը՝ փոփոխված լինելու դեպքում նշելով փոփոխության կատարման ամսաթիվը և փոփոխության էությունը,

3) պատասխանողի դիրքորոշման հակիրճ բովանդակությունը,

4) վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձի դիրքորոշումը,

5) վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձի դիրքորոշումը,

6) հակընդդեմ հայցվորի և հակընդդեմ հայցով պատասխանողի դիրքորոշումները,

4. Վճռի պատճառաբանական մասը պետք է պարունակի՝

1) վերլուծություն՝ կիրառելի իրավունքի վերաբերյալ,

2) արբիտրաժային գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը,

3) Արբիտրաժային դատարանի եզրակացությունը տվյալ փաստի ապացուցված լինելու վերաբերյալ՝ գնահատելով տվյալ փաստի հաստատման կամ մերժման համար արբիտրաժային վարույթին մասնակցող անձանց ներկայացրած յուրաքանչյուր ապացույցը.

4) արբիտրաժային վարույթին մասնակցող անձի ներկայացրած ապացույցն անթույլատրելի կամ ոչ վերաբերելի համարելու դեպքում՝

5) եզրակացություն՝ արբիտրաժային վարույթին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմնավոր լինելու վերաբերյալ,

6) արբիտրաժային վարույթին մասնակցող անձանց միջև արբիտրաժային ծախսերի բաշխման վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի պատճառաբանությունը.

5. Վճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի՝

1) յուրաքանչյուր պահանջը բավարարելու կամ մերժելու մասին արբիտրաժային տրիբունալի եզրակացությունը: Պահանջները մի քանի պատասխանողների դեմ ներկայացվելու դեպքում նշում վերջիններիս պատասխանատվության մասին, իսկ երաշխավորության դեպքում՝ նաև երաշխավոր հանդիսանալու և երաշխավորի պատասխանատվության սուբսիդիար կամ համապարտ լինելու մասին,

2) արբիտրաժային վարույթին մասնակցող անձանց միջև արբիտրաժային ծախսերի բաշխելու վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի եզրահանգումները,

3) հայցն ամբողջությամբ կամ մասնակի բավարարելու և կատարում ենթադրող վճիռ կայացնելու դեպքում նշում՝ վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն պարտապանի հաշվին դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով կատարելու մասին:

6. Մեկից ավելի արբիտրների մասնակցությամբ վեճի քննության դեպքում արբիտրաժային տրիբունալը վճիռ է կայացնում իր անդամների ձայների մեծամասնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ: Այնուամենայնիվ, նախագահողը կարող է որոշում կայացնել վարույթին առնչվող հարցերի շուրջ, եթե դրա համար լիազորված է կողմերի կամ արբիտրաժային տրիբունալի բոլոր անդամների կողմից:

7. Կողմերը կարող են համաձայնել, որ պատճառաբանություններ չպետք է նշվեն վճռում, կամ եթե կայացվել է համաձայնեցված պայմանների շուրջ վճիռ՝ հաշտության համաձայնության հաստատման վերաբերյալ:

8. Արբիտրաժային վճռի կամ դրա որևէ պատճառաբանությանը չհամաձայնվելու դեպքում յուրաքանչյուր արբիտր իրավունք ունի ներկայացնելու հատուկ կարծիք:

9. Արբիտրաժային տրիբունալի վճիռը պետք է կայացվի գրավոր ձևով և ստորագրվի միանձնյա արբիտրի կամ արբիտրների կողմից: Մեկից ավելի արբիտրների մասնակցությամբ արբիտրաժային վարույթի դեպքում բավական է արբիտրաժային տրիբունալի անդամների մեծամասնության ստորագրությունների առկայությունը այն պայմանով, որ վճռում նշվեն բացակայող ստորագրությունների պատճառները:

Հոդված 39. Վճռի ուղղումը և պարզաբանումը

1. Վճիռը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, եթե կողմերի համաձայնությամբ այլ ժամկետ չի սահմանվել՝

1) կողմը, տեղեկացնելով մյուս կողմին, կարող է դիմել արբիտրաժային տրիբունալ՝ խնդրելով ուղղել վճռում տեղ գտած թվաբանական սխալները, վրիպակները կամ գրասխալները կամ նմանաբնույթ այլ սխալներ.

2) կողմերի միջև համապատասխան համաձայնության առկայության դեպքում կողմը, տեղեկացնելով մյուս կողմին, կարող է դիմել արբիտրաժային տրիբունալ՝ խնդրելով պարզաբանել վճռի որևէ առանձին կետ կամ մաս.

3) արբիտրաժային տրիբունալը կողմի դիմումը հիմնավոր գտնելու դեպքում պարտավոր է այն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, կատարել համապատասխան ուղղումները կամ տալ պարզաբանում: Այդ պարզաբանումը դառնում է վճռի բաղկացուցիչ մասը:

2. Արբիտրաժային տրիբունալը վճռի կայացման օրվանից հետո՝ 30-օրյա ժամկետում, կարող է իր նախաձեռնությամբ ուղղել սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված սխալները:

3. Անհրաժեշտության դեպքում արբիտրաժային տրիբունալը կարող է երկարաձգել սույն հոդվածով նախատեսված սխալների ուղղման, պարզաբանման ժամկետը:

4. Վճռում տեղ գտած վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին արբիտրաժային տրիբունալը կայացնում է որոշում:

Հոդված 40. Լրացուցիչ վճիռը

1. Արբիտրաժային տրիբունալն արբիտրաժային վարույթին մասնակցող անձանց միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ կայացնում է լրացուցիչ վճիռ, եթե՝

1) վճռի պատճառաբանական մասում որևէ պահանջի անդրադառնալով՝ վճռի եզրափակիչ մասում ըստ էության չի լուծել այդ պահանջի բավարարման կամ մերժման հարցը.

2) լուծելով իրավունքի մասին հարցը՝ չի նշել հատկացվող գումարի չափը, հանձնման ենթակա գույքը կամ այն գործողությունները, որոնք պարտավոր է կատարել արբիտրաժային վարույթին մասնակցող անձը.

3) չի լուծել կամ թերի է լուծել արբիտրաժային ծախսերի հարցը.

2. Արբիտրաժային տրիբունալը վճռի կայացման օրվանից հետո՝ 30-օրյա ժամկետում, կարող է իր նախաձեռնությամբ կայացնել լրացուցիչ վճիռ:

3. Եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, լրացուցիչ վճիռ կայացնելու վերաբերյալ միջնորդությունը արբիտրաժային վարույթին մասնակցող անձանց կողմից կարող է ներկայացվել վճիռը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում:

4. Արբիտրաժային տրիբունալը լրացուցիչ վճիռ կայացնելու մասին միջնորդությունը պետք է քննի և լուծի այն ստանալու օրվանից 30-օրյա ժամկետում՝ կայացնելով լրացուցիչ վճիռ:

5. Անհրաժեշտության դեպքում արբիտրաժային տրիբունալը կարող է երկարաձգել սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված լրացուցիչ վճռի կայացման ժամկետը:

6. Լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու դեպքում արբիտրաժային տրիբունալը կայացնում է որոշում:

Հոդված 41. **Արբիտրաժային տրիբունալի վճռի կատարումը**

1. Արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարման համար դիմումի ներկայացման, դրա քննության հետ կապված հարցերը կարգավորվում են Օրենքով: